ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ 1948, № 3 *Общественные науки*

ԻՆՔՆԱԳԻՐՔ

Վ. Հ. Պողոսյան

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ[1]

Գրիգոր Արծրունին (1845—1892) արևելահայ հասարակական կյանքում հանդես եկավ 1872 թվին՝ իր «Մշակ» լրագրի հիմնադրմամբ, եթե չհաշվենք նրա գրած մի շարք հոդվածները, որոնք սկսած 1865 թվից տպագրվել են զանազան հայ պարբերականների էջերում։ Նա իր հրապարակախոսական գործունեությունն սկսեց այն ժամանակ, երբ Անդրկովկասում իր քայքայման պրոցեսն էր ապրում հին՝ միջնադարյան ֆեոդալական հասարակարգը և զարգանում ու ծավալվում էին կապիտալիստական հարաբերությունները։

19-րդ դարի երկրորդ կեսի առաջին տասնամյակները հայ իրականության մեջ եղել են հին, քայքայվող և նոր, բարձրացող դասակարգերի պայքարի տարիներ։ Այդ տարիները հայ ժողովրդի որպես ազգության ձևավորվելու տարիներն էին։ Հասկանալի է, որ մի այդպիսի էպոխա պետք է առաջադրեր նաև իր նշանավոր հասարակական գործիչներին։ Հայ բուրժուազիան իր ծոցից վեր հանեց նշանավոր գործիչ և հրապարակախոս Գ. Արծրունուն։

Արծրունին իր հրապարակախոսության մեջ արտացոլել է ժամանակի հայ հասարակական կյանքի բազմաթիվ երևույթները։ Նրա հրապարակախոսության նյութ են դարձել գրականության, լեզվի, դպրոցի, կրթության ու դաստիարակության, ընտանիքի, կնոջ էմանսիպացիայի ու հասարակության մեջ նրա ունեցած դերի և սոցիալական կյանքի բազմաթիվ այլ հարցեր։ Նա հատկապես աչքի է ընկել ազգային-ազատագրական պայքարի պրոպագանդայով։

Մենք հնարավորություն չունենք այստեղ մանրամասն կանգ առնելու Արծրունու տնտեսական հայացքների վրա։ Նրա տնտեսական ծրագիրը բխում էր իր դասակարգի՝ բուրժուազիայի շահերից։ Նա ցանկանում էր, որպեսզի հայ վաճառականներն ավելի արդյունավետ և հարմար օգտագործեն իրենց կուտակած կապիտալները արդյունաբերության մեջ, բռնեն արդյունագործության ճանապարհը։ Իսկ այդ, նախ կնպաստեր կապիտալիստական արդյունաբերության զարգացմանը, ապա հայ բուրժուազիայի համար կստեղծեր ամուր նյութական բազա։ Արծրունին ցանկանում էր հայերի քաղաքական իշխանության բացակայության պայմաններում հայ բուրժուազիայի համար ստեղծել տնտեսական մի ուժեղ պատվանդան, որի վրա հենվելով նա կարողանար ղեկավարող դեր խաղալ հայ հասարակական կյանքում։

Արծրունին իր գործունեության հենց սկզբից դեմ էր Անդրկովկասում ցարիզմի վարած քաղաքականությունից։ Նա գտնում էր, որ ցարիզմը հովանավորող դիրք էր բռնել դեպի հայ առևտրական կապիտալը։ 60-ական թվականներից ցարիզմը չէր խանգարում հայ բուրժուազիային իշխող դիրքեր ձեռք բերելու Անդրկովկասի արդյունաբերության մեջ։

Արծրունին իր ամբողջ գործունեության ընթացքում քաղաքական պայքար չքարոզեց Ռուսաստանի դեմ։ Ավելին, նա դեմ էր, որ հայերը ծավալեն ազգային-ազատագրական պայքար Արևելյան Հայաստանում։ Արծրունին իր դասակարգի շահերի տեսակետից այս հարցին մոտենում էր բավական ռեալ։ Նա հաշվի էր առնում հայ ժողովրդի անզորությունը պայքարելու հզոր ռուսական պետության դեմ։ Մյուս կողմից, Արծրունին, ինչպես և ողջ արևելահայությունը, դեռ չէր մոռացել հայ ժողովրդի մոտակա անցյալը։ Նրա ծանր ստրկությունը պարսկական և թյուրքական լծի տակ։ Այդ կապակցությամբ հիշենք Ս. Նազարյանի խոսքերը։ «Հայերը ճշմարտապես և իրավացի չնորհակալ են Ռուսաստանեն, որ աղատել է նորանց մի անտանելի անարգական

1 Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Պատմության Ինստիտուտի գիտական խորհրդի 1947 թ. հունիսի 21-ի նիստում՝ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ստանալու համար պաշտպանված դիսերտացիայի ինքնառեֆերատը։

ստրկությունից, և բացել է նոցա աչքն մի նոր բաղաքական կյանքի ասպարեզ»։[1]

Արծրունին այդ մասին շատ է գրել, բայց նշանավոր են նրա խոսքերը դրված երիտասարդ տարիներին։ Եթե չլիներ ռուսական հզոր պետությունը,— հարցնում է Արծրունին,—ի՞նչ կլիներ մեր վիճակը։ «Միշտ միևնույն տեղը կմնանք, ինչպես և մնացինք հայերս հինգ կամ վեց դար. լուռ, անշարժ, կյանքի նշան ևս ցույց չտալով, մինչև որ բախտավորապես հանեց մեզ մեր խոր քնից, մեր անշարժությունից,— ռուսական տերության ազդեցությունը»։[2]

Այս բոլորին հարկավոր է ավելացնել, որ հայ բուրժուազիան 1870—1880-ական թվականներին կարիք չուներ որևէ պայքար ծավալելու ցարիզմի դեմ։ Նա իր զարգացման համար ոչ մի արգելք չէր հանդիպում ռուսական բուրժուազիայի կողմից։ Մեր առաջադրած այս հարցը որոշակի է դառնում, երբ կարդում ենք ընկեր Ստալինի դիտողությունը, թե ինչու վրացական բուրժուազիան հակառուսական տրամադրություններ չուներ։[3]

Այսպես, ուրեմն, հայ բուրժուազիան ճնշված չէր ռուսական բուրժուազիայի կողմից, իսկ Անդրկովկասում ապրող մյուս ազգությունների բուրժուազիան նրա համար բոլորովին սարսափելի չէր։ Դեռ ավելին. 1870—1880-ական թվականներին հայ բուրժուազիայի ձեռք բերած տնտեսական հաջողություններն նրան թելադրում էին յայնացնել իր տնտեսական գործունեության շրջանները և իր ազդեցության ոլորտի մեջ ներգրավել նաև Արևմտյան Հայաստանը։ Սա մի շրջան էր, երբ հայ բուրժուազիան խոսում էր ամբողջ ազգի անունից և հարց էր դնում ազատագրել ճնշված հայ ժողովրդին ֆեոդալական Թյուրքիայի բարբարոս լծից։

Այդ ժամանակաշրջանում Արծրունին ավելի կոնկրետ կերպով սկսեց զբաղվել արևմտահայ ժողովրդի հարցով։ Արծրունու ազգային ազատագրական պրոպագանդան սերտորեն կապված էր նրա սոցիալ-տնտեսական հայացքների հետ։ Նա հայ ժողովրդի ապագան կապում էր Ռուսաստանում զարգացող կապիտալիզմի հետ, իսկ Թյուրքիայի հեսամնաց-ֆեոդալական հասարակարգը դիտում էր որպես արգելակող հանգամանք Հայաստանի տնտեսական և քաղաքական առաջադիմության համար։

Այս հիմնական դաղափարից ելնելով Արծրունին 19-րդ դարի 70-ական թվականների կեսերին սկսեց լայն պրոպագանդա՝ Ռուսաստանի օգնությամբ Արևմտյան Հայաստանի ազատագրման համար։ Նա իր հրապարակախոսական հոդվածներում աշխատում էր արևմտահայերին բացատրել, որ հայ ժողովրդի տնտեսական ու քաղաքական վիճակը անհամեմատ ավելի տանելի է ռուսական պետության մեջ, քան սուլթանական Թյուրքիայի ֆեոդալական դաժան հնման պայմաններում։

Արծրունին գրում էր, թե Թյուրքիայից եկող նամակները խոսում են հայերի ողորմելի և ճնշված դրության մասին։ Հայերը Թյուրքիայում ենթարկվում են բրդերի և Թյուրքերի սարսափելի հարստահարությանը։ Հատկապես ծանր է հայերի դրությունը Վանի և Մուշի շրջաններում, որտեղ հայերը պատրաստ են Թուրքանալ այդ տանջանքներից ազատագրվելու համար։ Այդ Թշվառ հայերի վիճակով ոչ ոք չի հետաքրքրվում, նրանք բոլորովին անպաշտպան են. «Կ. Պոլսի հայոց պատրիարքը ոչինչ ուժ և կարողություն չունի,— շարունակում է Արծրունին.— խեղճ գավառացի հայերին տերության առաջ պաշտպանելու։ Կ. Պոլսի հայոց ազգային և կրոնական ժողովը միայն դատարկ կրոնական հարցերով է զբաղված, ունի երևակայական իրավունքներ... հայերի սահմանադրությունը Թյուրքիայում մի խաղալիք է ուրեմն, որ տվել է տերությունը Կ. Պոլսի դատարկախոս, բարձր խոսքերով և ոչ թե իրական, կենսական, ամբոխի բարոյական և տնտեսական օգուտներով հափշտակվող հայ հոսհոսներին...»։[1]

Արծրունին այդ հոդվածում, ինչպես և մյուս շատ հոդվածներում, որոշակիորեն բաժանում է Կ. Պոլսի հայությանը գավառի հայությունից։ Նա ընդգծում է, որ այս երկու հատվածները միմյանց հետ նմանություն չունեն։ Եթե Կ. Պոլսի 300 հազարանոց հայ համայնքը որոշ արտոնություններ է վայելում, այստեղ տեղական պաշտոնյաների չարաշահություններ ավելի սակավ են պատահում, ապա գավառի հայության մարդկային իրավունքները ոտնակոխ են արված, այնտեղ տիրում է կատարյալ կամայականություն, հայերը հալածված են, ճնշված և եթե այսպես շարունակվի, այստեղի հայությունը կանհետանա այնպես, ինչպես անհայտացել են Հնդկաստանի հայերը։

[1] «Հյուսիսափայլ», 1859, հունվար, էջ 12։

[2] «Գրիգոր Արծրունու աշխատություններ», հատ. 1-ին, էջ 86։

[3] *И. В. Сталин* - Сочинения, том 11, стр. 307.

[1] «Մշակ», 1875 թ., № 51։

Եթե այդպես է գավառական հայության դրությունը և Կ. Պոլսի հայերը նրանց մասին չեն մտածում,— գրում է Արծրունին,— ապա «Մշակի» գործն է սիստեմատիկ կերպով ծանոթացնել արևելահայերին իրենց եղբայրների դրության հետ, մյուս կողմից «Ռուսաստանի հայը իր մնացած եղբայրներից՝ Թյուրքիայի և Պարսկաստանի հայերից ավելի բախտավոր, ավելի ապահով, ավելի ազատ, ավելի հարուստ և ավելի կրթված է։ Նա կուզենար օգնել իր ոտարերկրյա եղբայրներին, բայց չի ճանաչում նրանց կարիքները, որովհետև ճիշտ կերպով ծանոթ չէ նրանց դրության հետ»։

Արծրունու և նրա կողմնակիցների նպատակն էր արևմտահայերին կապել արևելահայերի հետ, քանդել երկու հատվածները բաժանող անջրպետը և որ գլխավորն է՝ հիմնովին փոխել արևմտահայերի վերաբերմունքը դեպի Ռուսաստանը և արևելահայ ժողովուրդը։ Սրանով կարելի է բացատրել այն պայքարը, որ «Մշակը» սկսեց արևմտահայ մի շարք թյուրքասեր գործիչների և հատկապես այսպես կոչված ազգային սահմանադրության դեմ։ Արծրունին աշխատում էր ցույց տալ, որ Ղրիմի պատերազմից հետո թյուրքական կառավարությունը Կ. Պոլսի հայերի կրոնական համայնքի ներքին գործերում մի շարք զիջումներ անելով փորձում էր արևմտահայերին կտրել Ռուսաստանի ազդեցությունից։ Արծրունին հերքում էր ազգային սահմանադրությունը, որպես մի անիրական բան, որպես «օդային մի ամրոց», որը հայերին ոչինչ չէր տվել, բացի առանձին ոգևորությունից»։[2]

Արևմտահայ ժողովրդի ազատագրման համար Գ.Արծրունու ծավալած պրոպագանդան նոր թափ ու ծավալ է ստանում 70-ական թվականների կեսերից, երբ թյուրքերի բռնապետական, բարբարոսական տիրապետության դեմ ազգային-ազատագրական շարժումներ են սկսում բալկանյան սլավոնները։

Ազգային-ազատագրական պայքարի նշանավոր այս տարիներին, երբ վճռվում էր Թյուրքիայի ճնշված ժողովուրդների բախտը, հայ ժողովուրդը, որը նույնպես հեծում էր թյուրքական լուծակալության ծանր լծի տակ, չէր կարող հանդիսատեսի դերում մնալ։ Սլավոն ժողովուրդների հերոսական ազատագրական պայքարը ոգևորում էր հայ ժողովրդին։

Արծրունին ոչ միայն համակրությամբ էր վերաբերվում դեպի սլավոնների ազգային-ազատագրական շարժումները, այլև իր հոդվածներում արդարացնում էր նրանց ապստամբվելը Թյուրքիայի դեմ։ «Արդյո՞ք նրանք, սլավոնները, թյուրք պետության հպատակները, իրավունք ունեին ապստամբվելու օրինական պետության դեմ։ Այո,— պատասխանում է Արծրունին,— նրանք դենք են վերցրել իրենց հասարակ մարդկային իրավունքները պաշտպանելու համար»։[1]

1875—1876 թ. թ. նորից բարձրացավ այսպես կոչված «Արևելյան հարցը»։ Ինչպես միշտ, այնպես էլ այդ առիթով, ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը Թյուրքիայի բռնապետության դեմ օգտագործվեց Եվրոպական իմպերիալիստական պետությունների կողմից՝ իրագործելու համար իրենց հափշտակողական պլանները Արևելքում։

Արծրունին գտնում էր, որ Արևմտյան Եվրոպան միայն իր շահերի համար է միջամտում Թյուրքիայի ներքին գործերին և նորից փորձում մի խաղ խաղալ ճնշված ժողովուրդների գլխին, ինչպես այդ եղել է նախկին ժամանակներում։[2]

Արծրունին եվրոպական պետություններից առանձնացնում էի Ռուսաստանին և ցույց էր տալիս, թե միայն նա է, որ ոչ միայն խոսքով, այլև գործով օգնում է Թյուրքիայում ճնշված, հարստահարված ժողովուրդներին։ Իսկ եթե Եվրոպայում էլ կա համակրություն դեպի այդ ժողովուրդները, ապա դա մի մասնավոր երևույթ է և երբեք չի արտահայտում տվյալ պետության վերաբերմունքը դեպի ճնշվածները։[3]

Ռուսաստանի արևելյան քաղաքականությունը հետապնդում էր Ասիայի մեծ մասի և Կ. Պոլսի գրավումը, սակայն ժխտել չի կարելի, որ նրա այդ քաղաքականությունը օբեկտիվորեն խթանում էր Բալկանյան ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման ծավալումը։

Հայ հասարակությունը Թյուրքիայում լարված ուշադրությամբ հետևում էր Բալկանյան դեպքերի զարգացմանը, իսկ Կ. Պոլսի հայ գործիչները դեռ չէին կարողանում կողմնորոշվել ստեղծված քաղաքական բարդ իրադրությունների պայմաններում և բռնել էին սպասողական դիրք։ Հայ հասարակական գործիչներից առաջինն Արծրունին էր, որ ըմբռնեց ստեղծված քաղաքական իրադրության անշափ կարևորությունը, ցանց շարժման մեջ դնել հայ հասարակական կյանքը և մեծ եռանդով ծավալեց իր ազատագրական պրոպագանդան։

1 «Մշակ», 1880 թ., № 1։
2 «Մշակ», 1876 թ., № 45։

1 «Մշակ», 1876 թ., № 44։
2 Նույն տեղում։
3 «Մշակ», 1877 թ., № 58։

Արծրունու առաջին առաջնորդողը նվիրված այդ հարցին տպագրվեց 1876 թվի հունիսի 1-ին և կրում էր «Քրիստոնեություն և մահմեդականություն» վերնագիրը։ Այդտեղ Արծրունին գրում էր, թե մի տարի է ինչ սկսվել է սլավոնների ազգային-ազատագրական պայքարը Թյուրքիայի բռնակալ ուժի դեմ։ Սլավոնների ապստամբությունն ամբողջ աշխարհի հասարակական կարծիքի քննության առարկան է դարձել։ Ամեն տեղ հիշվում են Թյուրքիայի անտանելի լծի դեմ ապստամբած ժողովուրդների անունները։ Միայն մի ազգի անուն ոչ մի տեղ չենք հանդիպում, դա հայ ազգի անունն է, որ գուցե ավելի ծանր գրության մեջ է գտնվում, քան թե սլավոն ազգերը։ Այդ ինչպե՞ս պատահեց, որ մի ճնշված, հարստահարված ժողովուրդ մինչև այժմ հեռու մնաց այդ ընդհանուր շարժումից,— հարց է տալիս Արծրունին և ապա բացատրում այդ երևույթի պատճառը. «Թյուրքիայի հայերը ճնշված, ստորացած են, մինչև այն աստիճան կրավորական են դարձրած, որ իրանց սեփական շրջանից անկարելի է սպասել բռնավորության, հալածանքի և ճնշման դեմ բողոք... Հայը հասել է գարավոր ստրկության շնորհիվ անկման այն աստիճանին, որ կորցրել է հավատ դեպի իր սեփական ուժերը...»։

Մի՞թե այս դրության մեջ պետք է մնան հայերը,— շարունակում է Արծրունին,— իհարկե ոչ, բայց նրանք այնքան ճնշված, ստրկացած են, որ այժմ սպասել նրանցից բողոք իրենց հալածանքի, ճնշման դեմ, անկարելի է։ Այդ պատճառով էլ հայերի մեջ ազատագրական շարժում սկսելու համար, ըստ Արծրունու, պետք էր դիմել դրսի օգնությանը։

Արծրունին համոզված էր, որ այդ դրսի հզոր ուժը կարող է լինել միայն Ռուսաստանը։ Նրա կարծիքով Ռուսաստանը իր շահերի տեսակետից պետք է ուշադրություն դարձնի հայերի վրա։

Դ. Արծրունին իր մյուս «Այժմ կամ երբեք» առաջնորդողում նորից հիշեցնում էր արևմտահայ ժողովրդին, որ պետք է սգուստ բաղել ստեղծված քաղաքական հանգամանքներից, քանի որ նորից այդպիսի բարեհաջող ա-ռիթ չի ներկայանա։ Արծրունին այստեղ ևս վերադառնում է այն հարցին, թե միմիայն Ռուսաստանի վրա պետք է հույս դնել։ Անգլիայի քաղաքականությունից պետք է զգուշանալ, նա խարդախ է, խորամանկ և իր շահերի համար ոչ միայն պաշտպանում է Թյուրքիային, այլև սովորեցնում է նրան նենգամիտ միջոցներով խաբել քաղաքակիրթ աշխարհը։[1]

Ավելի նշանավոր են Արծրունու իրար հետևից գրած երկու առաջնորդողները. «Մինչե՞ երբ» և «Մի՞թե այժմ էլ հայերի հերթը չէ»։ Այդ առաջնորդողներում Արծրունին զարգացնում էր այն միտքը, թե արևմտահայ ժողովուրդը չի կարող ազատագրվել ճնշումներից ու հալածանքներից, չի կարող ստանալ հասարակ մարդկային իրավունքներ, առանց զինված պայքարի, առանց ապստամբության։ Ջենքն է, որ պետք է վճռի հայ ժողովրդի բախտը։ Արծրունին պիտակցում է, որ ապստամբությունները, զինված պայքարը չեն լինում առանց զոհերի։ Ուրեմն հարկավոր են զոհեր, նահատակներ։ Ժողովրդի մեծամասնությունը կործանումից փրկելու համար հարկավոր է արյուն թափել։

«Մենք ասում ենք,— գրում է Արծրունին,— տունը քանդվում է, ընկնելու, ավերակ դառնալու, փուլ գալու վրա է, շուտով դուրս եկեք այնտեղից, երկաթը ձեռին քանդեցեք նրա ծռած, սպառնող պատերը,— եթե ոչ, ամենքդ էլ նրա ավերակների տակը կմնաք. իսկ նրան քանդելու ժամանակ գուցե և ձեզանից շատերը կզոհվեն, կսպանվեն գլխին ընկած ագուռների և գերանների ծանրության տակ,— բայց դարձյալ շատերը և ոչ ամենքը...»։[2]

Արծրունին վիճում էր մեղվականների հետ, որոնք հայ ժողովրդին համբերություն էին քարոզում։ «Շատերը մեզ հավատացնում են, որ այդ ցորը է, լավ է համբերեն բանդվող տան բնակիչները. տունը ինքն իրան նորից կպահպանվի, ծռված պատերը կուղղվեն և ժամանակով նորից կկայունանա շինությունը։ Ասում են, որ հայը ազատ շունչ կքաշի Թյուրքիայում, երբ տերությունը կլուսավորվի. մինչև երբ սպասել դրան, երբ նրանք հերքում են լուսավորությունը, երբ հայ տարրը կորչում, ոչնչանում կամ գաղթում է Թյուրքիայից։ Ծրևի այդ կլինի այն ժամանակ, երբ ոչ մի հայ չի մնա Թյուրքիայում»։[3]

Նա ավելի կոնկրետ էր դնում հայ ժողովրդի ապստամբության անհրաժեշտության հարցը, երբ կատաղի ատելությամբ և մոլեռանդությամբ լցված Թյուրքերը Փոքր Ասիայի քրիստոնյա ժողովուրդներից սկսել էին առնել Բալկանյան սլավոնների ապստամբության վրեժը։ Այդ տարիներին Արևմտյան Հայաստանում սպանությունները ու ավերածությունները զարհուրելի չափեր ընդունեցին։ Արծրունին մեծ վրդովմունքով էր խոսում այն դաղանու-

1 «Մշակ», 1876 թ., № 94։

1 «Մշակ», 1876 թ., № 23։

2 «Մշակ», 1876 թ., № 97։

3 Նույն տեղում։

թյունների մասին, որ կատարվում էր հայ ժողովրդի նկատմամբ։ Նա զարմանքով բացականչում էր. «Եվ այդ մարդիկ գենք չեն վերցնում, խանչալ չեն ցցում այն գազանների կուրծքը, գանակ չեն կոխում այն հրեշների փորը, որոնցից կրում են այն անասելի մարմնական և անեկարագրելի բարոյական ամեն մարդկային արժանավորություններ ստորացնող, ոչնչացնող տանջանքները...»։ [1]

Արծրունու ազատագրական գաղափարները, նրա մարտական կոչերը ապստամբելու Թյուրքիայի բռնապետության դեմ, թնդանոթաբար ընդունվեցին հայ պահպանողական շրջանների կողմից՝ Արևելյան և Արևմտյան Հայաստանում։ Պահպանողականները գտնում էին, որ հայերը սլավոնների նման չպետք է դիմեն զինված ապստամբության։ Նրանք համբերություն էին քարոզում դեպի «Թյուրքական բարեխնամ» կառավարությունը, գտնում էին, որ Թյուրքիայում հայ ժողովրդի տնտեսական և կուլտուրական զարգացման համար կան բոլոր անհրաժեշտ պայմանները։ Այդ կարգի մարդիկ այնքան հեռու գնացին, որ պնդում էին, թե Փոքր Ասիայում հնարավոր է հիմնել Թյուրքիա-հայկական պետություն, ինչպես Ավստրո-Հունգարիան՝ Եվրոպայում։-

Արծրունին «Մշակում» մերկացնում էր այդ մարդկանց։ Իր «Ռուսաստանը և Թյուրքիայի հայերը» առաջնորդողում ցույց էր տալիս, որ հայ ժողովրդի համակրությունը Ռուսաստանի կողմն է, իսկ Ռուսաստանին թշնամի են միայն թյուրքական շրջանների հետ կապված, նրանց միջոցներով ապրող հայ կղերականները և հարուստները։ Հասկանալի է, որ վերջիններիս շահերը թելադրում են պաշտպանել Թյուրքիայի գոյությունը. «Որքան Հայաստանի հայոց ամբոխը,— գրում էր Արծրունին,— մոտ երեք միլիոն Փոքր Ասիայի մեծ մասամբ երկրագործ և արհեստավոր հայոց ժողովուրդը ցանկանում է միանալ Ռուսաստանին, ապրել հաստատ օրենքների հովանավորության ստակ, գուրս դալ այնպիսի դրությունից, որտեղ նա ապրում է անսահման կամայականության տակ, անպաշտպան լինելով հարստահարությունների, բարբարոսությունների, մահմեդական ամբոխի, ավազակների և թյուրք պաշտոնյաների կամայականության դեմ,— այնքան Կ. Պոլսի հայոց հասարակության մեծ մասին ձեռնտու է Օսմանյան պետության հովանավորության տակ ապրիլ։ Կ. Պոլսի հայերը ապրում են օտար հողի վրա, կորված են հողից, երկրի տեսական և բարոյական օգուտներից, պարապում են վաճառականությամբ, կապալառությամբ, վաշխառությամբ և շատերը երանցից կապված են թյուրքաց տերության հետ ավելի էլ դրա կապերով։ Օսմանյան տերության պետական ծառայության մեջ գտնվելով։ Հասկանալի է, որ նրանց ձեռնտու է թույլ, միշտ փոփոխական ուղղություն ունեցող կառավարություն»։ [1]

Գրիգոր Արծրունին այդ օրերին հրատարակեց մի բրոշյուր, ուստերեն լեզվով «Восточный вопрос» խորագրով։ Այդ բրոշյուրը հրապարակվեց մի այնպիսի ժամանակ, երբ եվրոպական դիվանագիտությունը փորձում էր վճռել այսպես կոչված Արևելյան հարցը։ Արծրունին դրում էր, թե Արևելյան հարցը ավելի լայն է, քան այժմ այն հասկանում են։ Նա միայն սլավոնների փրկության հարցը չէ։ Թյուրքիայի բռնապետական լծից պետք է ազատագրվեն Բալկանյան ժողովուրդները, ինչպես և հարկավոր է, պետք է ազատություն տալ Թյուրքիայի կողմից ճնշված բազմամիլիոն մյուս ժողովուրդներին, որոնք ապրում են Փոքր Ասիայում։

Արծրունին կողմնակից էր Արևելյան հարցի արմատական լուծմանը՝ Թյուրքիայի կողմից ճնշված բոլոր ժողովուրդների ազատագրման միջոցով, նա չէր հավատում Եվրոպայի ջանքերին, որը փորձում էր անձեռնմխելի պահել Օսմանյան կայսրությունը և ռեֆորմների ճանապարհով կենդանացնել բազմազգ թյուրքական պետությունը։

Արծրունին իրավացի էր, որ չէր հավատում եվրոպական պետությունների արևելյան բաղաքականության անկեղծությանը, սակայն նա ճիշտ չէր նաև, երբ հնարավոր էր համարում մի ուրիշ նվաճողի՝ ցարական Ռուսաստանի օգնությամբ ազատագրել Թյուրքիայի կողմից ճնշված ժողովուրդներին։

Երբ 1877 թ. սկսվեց ռուս-թյուրքական պատերազմը, Արծրունին գրեց հետևյալը. «Ցանկանանք մեր զորքերին հաջողություն, որից կախված է Արևելքի ազատությունը, երա բնակիչների խաղաղ, ապահով դրությունը և երկար ժամանակ ճնշման տակ մնացած քրիստոնյա ազգերի բարոյական, տեսական և մասավոր վերանորոգությունը»։-

Ինչպես տեսնում ենք, Արծրունին ռուսական զորքերի հաջողության հետ է կապում արևելյան ժողովուրդների ազատագրման գործը, նա ջանում է ցարիզմին ներկայացնել ճնշվածների ազատարարի դերում։

1 «Մշակ», 1876 թ., № 38։

2 «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1876 թ., № 27։

1 «Մշակ», 1876 թ., № 31։

2 «Մշակ», 1877 թ., № 26։

Գրիգոր Արծրունին պատերազմի տարիներին ծավալեց մի չտեսնված եռանդուն գործունեություն։ «Մշակը» իր համարները ամբողջովին նվիրում էր Արևմտյան Հայաստանից եկող լուրերին։ Նրան հատկապես մտահոգում էին այն հաղորդագրությունները, որ իբր Անգլիան որոշել է թույլ չտալ Ռուսաստանին գրավել Արևմտյան Հայաստանը։ Այդ կապակցությամբ Արծրունին նորից սկսում է քննել այն հարցը, թե ի՞նչ է տալու այս պատերազմը հայ ժողովրդին, ի՞նչ է լինելու նրա ապագա վիճակը։

Այդ հարցի պարզաբանմանն է նվիրված Արծրունու «Հայաստան և Եվրոպա» առաջնորդողը։ Կար ժամանակ,— գրում էր նա,— երբ Արևմտյան Եվրոպան բոլորովին չէր հիշում Հայաստանը։ Արևմուտքում ընդհանրապես Արևելքի մասին խոսում են միայն այն ժամանակ, երբ այնտեղ կան որոշ շահեր կամ բախումներ։ Բայց ի՞նչ է արել Եվրոպան Արևելքի համար, հարցնում էր Արծրունին։ Ֆրանսիան, երբ Նապոլեոն 3-րդի ժամանակ ամենակարողն էր Թյուրքիայում, ի՞նչ արավ թյուրքահպատակ քրիստոնյաների համար, բացի նրանց մեջ կրոնական երկպառակություններ գրգռելուց, կաթոլիկության և պապականության ազդեցությունը Արևելյան քրիստոնյաների մեջ տարածելուց։ Իսկ այժմ Անգլիան միայն հետևում է իր անձնական օգուտներին, իր նյութական շահերին։ Եվ եթե նրա շահերը թելադրում են, ապա նա ամեն ինչ կանի, որ «Հայաստանը էլի ստրկացած մնա մահմեդական ճնշման տակ»։[1]

Արծրունին իր «Հայաստանը ի՞նչ պետք է դառնա» առաջնորդողում ավելի կոնկրետ է դնում Հայաստանի ապագայի հարցը։ Պատերազմը բերում է Թյուրքիայի կործանումը։ Թյուրքիային պատկանող եվրոպական երկրները նրանցից կբաժանվեն։ Այդ պայմաններում ամբողջ Արևմտյան Հայաստանը կցանկանա միանալ Ռուսաստանին, բայց եթե Ռուսաստանը նվաճումներ չկամենա անել, հայերի միակ ցանկությունն է, որպեսզի Ռուսաստանը Հայաստանին իր հովանավորության տակ առնի և նրա համար ստեղծի մի ինքնավարություն, «քան թե նորից վերադարձրած լինի Թյուրքիայի բարբարոս, ճնշող, ոչնչացնող տիրապետությանը»։[2]

Եվ այսպես, Արծրունին ելնելով ընդհանուր քաղաքական և պատերազմական իրադրությունից, Հայաստանի փրկությունը տեսնում էր Ռուսաստանի միացման մեջ։ Փրկության այդ ուղին Արծրունու համար ավելի անհրաժեշտ է թվում, երբ Թյուրքիայում 1877 թ. ամռանը հայ ժողովրդի բնաջնջման փորձերն ակնհայտ են դառնում։

1878 թ. փետրվարի 19-ին Սան-Ստեֆանոյում խաղաղության պայմանագիր ստորագրվեց Թյուրքիայի և Ռուսաստանի միջև։ Արյունահեղ պատերազմը վերջացավ Ռուսաստանի լիակատար հաղթանակով. Թյուրքիան հանձնեց հարավային սլավոնների իրավունքները և հաղթող Ռուսաստանը տիրապետող դիրք ձեռք բերեց Բալկանյան թերակղզում։ Մի շարք հայ և ռուս գործիչների ջանքերով պայմանագրի 16-րդ հոդվածում դրվեց հայկական նահանգներում ռեֆորմներ ձեռնարկելու անհրաժեշտության հարցը։

Հայկական հարցը ծագելով որպես արևմտահայության ազգային - ազատագրական ձգտումների արտահայտություն և կապված լինելով այն տևական պայքարի հետ, որ մղում էր հայ ժողովուրդը Թյուրքիայի դաժան ֆեոդալական կարգերի դեմ՝ ազգային անկախություն ձեռք բերելու և արևելահայերի հետ միավորվելու և ազգային միասնական մարմին կազմելու համար, հետագայում՝ Սան-Ստեֆանոյի դաշնադրից հետո, դադարեց սոսկ հայկական նշանակություն ունենալուց, դարձավ միջազգային դիվանագիտության առուծախի առարկա։

Հայ ժողովրդի համար ստեղծված ներքին և արտաքին քաղաքական բարդ պայմաններում հարկավոր էր ընտրել փրկության այն ուղին, որը բոլորից հարմարը կլիներ արևմտահայության վիճակը կարգավորելու համար։ Ցանկալի և հնարավոր ուղին՝ Ռուսաստանի հետ լինելն էր, նրանից օգնություն ստանալը, որովհետև 1878 թ. իրադրության մեջ Հայկական հարցի լուծման ռուսական ծրագիրը հայ ժողովրդի համար ձեռնտու էր և ռեալ։

Ռուսաստանից օգնություն ստանալու, նրա ծրագիրներին և ձգտումներին արգելք չլինելու քաղաքականության ճանապարհն էին բռնել այսպես կոչված ռուսական օրիենտացիա ունեցող շրջանները։ Սրանք արտահայտում էին գավառի ամբողջ հայության քաղաքական իդեաները։ Հենց Կ. Պոլսում, մի խումբ հայ առաջավոր մտավորականներ Ա. Արփիարյանի գլխավորությամբ, ուտոպիա էին համարում Անգլիայի վրա հույս դնելը, և կոչ էին անում սերտ մերձեցում ստեղծել Ռուսաստանի հետ։ Այս ռուսասերներն էին, որ Սան-Ստեֆանոյի պայմանագրի կնքման օրերին Դ. Արծրունու նման ծավալեցին բավականին եռանդուն գործունեություն և ամեն ջանք գործ դրին, որպեսզի ապահովեն Ռուսաստանի հովանավո-

1 «Մշակ», 1877 թ., № 30։
2 «Մշակ», 1877 թ. № 33։

բությունը հայ ժողովրդի վրա։ Սրանք էին, որ Մ. Իզմիրլյանին և Ն. Նարպեյին ռուսական կառավարության և էջմիածնի կաթողիկոսի հետ բանակցություններ վարելու համար դուրս գցեցին Ռուսաստան։

Ռուսասերների հետ միաժամանակ շարունակեցին իրենց գործունեությունը անգլիական օրիենտացիա ունեցող շրջանները։ Հայերի այս խմբի մեջ եռանդով աշխատում էր Կ. Պոլսի անգլիական դեսպան Լայարդը։ Նա էր, որ հայերի մեջ կազմակերպում էր ամեն տեսակի ձեռնարկումներ Ռուսաստանի դեմ։ Այս խմբին բավական մոտ էին կանգնած հայ բողոքականները ու կաթոլիկները, որոնք դեպի Ռուսաստանն իրենց հակակրական ցույցերով բավականին աչքի էին ընկել։ Անգլիական դեսպանը ամեն ինչ անում էր, որպեսզի հայերին կտրի Ռուսաստանից, նա էր, որ հայ գործիչներին խորհուրդ տվեց հրաժարվել Սան-Ստեֆանոյի 16-րդ հոդվածից, Հայաստանի համար ինքնավարություն պահանջել և խուսափել մտնելու Ռուսաստանի հովանավորության կամ տիրապետության տակ։

Սան-Ստեֆանոյի պայմանագրի վերանայման կապակցությամբ անգլիասեր խումբը առատ խոստումներ էր ստանում անգլիական կառավարությունից։ Մինչև իսկ թյուրքական կառավարությունը դեմ չէր, որ հայերը գործունեության նոր ուղղություն բռնեն և Սան-Ստեֆանոյի 16-րդ հոդվածը Եվրոպական պետությունների քննության առարկա դարձնեն։ Անգլիական և թյուրքական կառավարությունների նպատակն էր օգտագործել հայ ժողովրդին Ռուսաստանի դեմ, հրավիրվող Բեռլինի խաղաղության կոնգրեսում վերանայեր Սան-Ստեֆանոյի խաղաղության պայմանագիրը։

Բեռլինի կոնգրեսի նախօրյակին Խրիմյանի գլխավորությամբ մի պատվիրակություն մեկնեց Եվրոպա։ Սրա նպատակն էր Եվրոպայից խնդրել ինքնավարություն Հայաստանի համար։ Ինչպես փաստերը ցույց են տալիս, հայկական պատգամավորությունը Եվրոպայում ղեկավարվում էր Անգլիայում ապրող մի բուռն հայերի կողմից, Ներսես պատրիարքը նույնպես սերտ կերպով կապված էր Լոնդոնի և Մանչեստրի հայերի հետ, նրանցից խորհուրդներ էր հարցնում արտաքին քաղաքականության հարցերի շուրջը, իսկ պատրիարքարանի բոնելիք ուղղության մասին այնտեղից ցուցմունքներ ստանում։[1]

Դր. Արծրունին ուշադրությամբ հետևում էր Կ. Պոլսի հայկական շրջանների գործունեությանը։ Արծրունին ժամանակին չգգաց և չհասկացավ, թե ում շահերին է ծառայում հայկական պատգամավորությունը Եվրոպայում։ Նրան թվում էր թե Կ. Պոլսի հայ գործիչների ջանքերը հետապնդում են մի նպատակ՝ ապահովել Սան-Ստեֆանոյի 16-րդ հոդվածի գոյությունը։ Այդ է հաստատում Բեռլինի կոնգրեսի օրերին գրած նրա «Թյուրքիայի հայերի պահանջները» առաջնորդողը, որտեղ նա զարգացնում է իր նախկին ծրագիրը Հայաստանի վարչական ինքնավարության մասին, Ռուսաստանի հովանավորությամբ։ Հետաքրքրիրն այն է, որ այս առաջնորդողումն էլ, ինչպես և առաջ Արծրունին զգուշացնում էր հայերին, չմոռանալ որ ռուսները հարուցեցին հայոց հարցը, իսկ անգլիացիները եվրոպական մյուս ազգերի համեմատությամբ բոլորից շատ իրենց հայ ժողովրդի բարեկամ ձևացրեցին. թե անգլիացիների համար անհասկանալի բան է բարեկամությունը, երբ գործը հասնում է նյութական ու տնտեսական շահերին և դրա համար էլ «Որքան էլ Թյուրքիայի հայը անգլիացիներին բարեկամ համարեր, այնուամենայնիվ լավ է, եթե նախապես հասկանա, որ պետք է շատ զգուշանա այդ տեսակ բարեկամներից»։[1]

Բայց երբ Կիպրոսի դաշնագրությունից և Բեռլինի կոնգրեսից հետո, Արծրունին իմացավ Անգլիայի իսկական նպատակները, սկսեց մի ամբողջ արշավանք Անգլիայի խաբեբա, խարդախ քաղաքականության դեմ և խիստ քննադատության ենթարկեց հայկական պատգամավորության գործունեությունը Բեռլինի կոնգրեսի ժամանակ։ Արծրունին գրում էր, թե հարկավոր է պատահածից խրատվել և ավելի լավ նախապատրաստվել ազատագրական պայքարին։ Նա միաժամանակ գրում էր այն հայ գործիչների դեմ, որոնք ջանում էին ցույց տալ, որ հայերը Բեռլինում Սան-Ստեֆանոյի համեմատությամբ շահեցին, որ Ռուսաստանի փոխարեն այժմ կա վեց պետությունների խոստացած ապահովությունը։

Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածը շարդարացրեց հայ ժողովրդի հույսերը։ Բայց այդ տարիների իրադարձությունները, հատկապես Հայկական հարցի միջազգային բնույթ ընդունելը, զգալի կերպարանափոխում առաջ բերին հայերի հասարակական հայացքների մեջ։ Հայ ժողովրդի ազգային գիտակցությունը ավելի ուժեղացավ, իսկ այդ նպաստեց այն բանին, որ Ասիայով մեկ ցրված հայերը իրար ավելի մոտենան, իրար շահերն ավելի լավ հասկանան։ Միաժամանակ Արևմտյան Հայաս-

---

1 Մուշեղ եպիսկոպոս— Մանչեստրի հայ գաղութը։ Պոստոն, 1911 թ. էջ 88։

1 «Մշակ», 1878 թ., № 103։

տանի գավառներում, ինչպես և հայաբնակ Թյուրքական քաղաքներում կազմակերպվեցին բազմաթիվ կրթական և լարեգործական ընկերություններ, որոնք իրենց ներքին զարկ տվին ժողովրդի ազգային դիտակցության զարգացմանը։ Ավելի սերտ դարձավ մերձեցումը արևմտահայերի և արևելահայերի մեջ։

Կ. Պոլսի հայ գործիչների մի զգալի մասը Հայաստանում կիրառվելիք բարենորոգումների հարցը կապում էր Բեռլինի 61-րդ հոդվածի իրականացման հետ։ Նրանք սպասում էին Եվրոպայի, հատկապես Անգլիայի օգնությանը կենսագործելու Հայաստանի համար նախատեսվող ռեֆորմները։

Բոլորովին այլ դիրք բռնեց Արծրունին։ Բեռլինի կոնգրեսից հետո նա դժգոհ էր, որ հայերը Եվրոպայի օգնությունն են ժուրում։ Արծրունին հավատացնում էր, որ հայերի ջանքերը իզուր են, որ նրանք դիվանագիտական ճանապարհով ոչինչ չեն ստանա և հայ ժողովուրդը չհասկացավ, որ լուսավորված Եվրոպայի XIX դարի դեմքն է՝ «ես ապրստամբվում եմ, ուրեմն ես գոյություն ունեմ»։ Իսկ այդ բանը «ժամանակակից լուսավորված աշխարհը միակ դրական և օրինավոր մրցոց է համարում մի ազգի համար իր գոյությունը վկայելու...»[1]

Եվ ի՞նչ շահեցին հայերը, երբ մնացին հավատարիմ ու չապստամբեցին Թյուրքիայի դեմ, հարցնում էր Արծրունին, ոչինչ, բացի նոր ճնշումներից և հալածանքներից։ Եվ Արծրունին համառությամբ առաջ էր տանում իր ազատագրական-ապստամբական ծրագիրը։ Նա միայն գրա մեջ էր տեսնում հայ ժողովրդի փրկությունը։ «Եվ ճշմարիտ, ո՞րն է ավելի դժվար,— հարցնում էր Արծրունին,— ապստամբվել և մի քանի ամիս, գուցե մի երկու տարի իր և թշնամու արյունը թափել, թե հազար տարի շարունակ ամենօրյա կուլտուրական պատերազմ վարել ճնշող ուժի դեմ»։[2]

Այժմ միայն փորրիկ, բայց հերոսական Զեյթունն է հասկացել, որ իր գոյությունը ապացուցելու և մարդկային իրավունքներ ձեռք բերելու համար հարկավոր է ապստամբվել։ Արծրունին ի սրտե ողջունում էր Զեյթունի 1878 թ. ապստամբությունը Թյուրքիայի դեմ։[3]

Գրիգոր Արծրունին միջազգային դիվանագիտության բաղաքականությունը Արևելյան հարցի կապակցությամբ ընության նյութ է դարձնում, այն ժամանակ, երբ եվրոպական մեծ պետությունները փորձում էին տնօրինել Թյուրքիայի քրիստոնյա ազգերի բախտը։

Պետք է նկատել, որ Արծրունին դիվանագիտության հետ կապված շատ հարցերում կարողացել է ճիշտ կողմնորոշվել և երբեմն բավական հաջող կերպով բացահայտել մեծ պետությունների արտաքին քաղաքականության բարդ խնդիրները։

Արծրունին ցույց է տալիս, որ Արևելքում իրենց տիրապետությունը հաստատելու համար պայքարում էին Անգլիան և Ռուսաստանը, իսկ 90-ական թվականներից սկսած՝ նաև Գերմանիան։ Նրա կարծիքով Ֆրանսիան, որ խոշոր դեր էր կատարում Արևելքի գործերում, ֆրանս-պրուսական պատերազմի մեջ կրած պարտությունից հետո միաժամանակ հեռացավ Մերձավոր Արևելքի գործերից։ Իսկ ինչ վերաբերվում է Ռուսաստանին, ապա Արծրունին ընդհանրապես խուսափում էր հատուկ քննության նյութ դարձնել ցարիզմի արտաքին քաղաքականությունը։ Բայց նա շատ առիթներով խոսելով Անգլիայի արտաքին քաղաքականության հարցերի մասին, հստակ կերպով ցույց էր տալիս, որ ռուս-թյուրքական պատերազմի տարիներին, ինչպես և Բեռլինի կոնգրեսի օրերին, գնում էր պայքար այդ երկու պետությունների միջև Մերձավոր Արևելքի տիրապետության համար։ Արծրունու համակրությունը Ռուսաստանի կողմն էր, իսկ անգլիական դիվանագիտության հաղթանակները նա համարում էր մեծ դժբախտություն Արևելքի, ինչպես նաև հայ ժողովրդի համար և ցավով էր արձանագրում, որ Ռուսաստանը Բեռլինի կոնգրեսից հետո եւս մղվեց արևելյան գործերից։

Արծրունու կարծիքով Ռուսաստանը այն ուժն էր, որ նպաստում էր Թյուրքիայի կործանմանը, իսկ այդ բանի մեջ տեսնում էր հայ ժողովրդի ազատագրումը և Հայկական հարցի բարեհաջող լուծումը։ Անգլիան իր շահերից ելնելով միշտ աշխատել է պաշտպանել Թյուրքիայի դոյությունը և նրան օգտագործել, որպես ռազմական ուժ՝ Ռուսաստանի դեմ։ Իր այդ քաղաքականությամբ նա խանգարել է Արևելքի ճնշված քրիստոնյա ժողովուրդներին՝ պայքարելու Թյուրքիայի դաժան տիրապետության դեմ, ազատագրվելու դաժան ճնշումից։

Ցարիզմի արտաքին քաղաքականության մեջ տեսնելով Անգլիայի՝ դեպի Արևելք տարածվելու /դեմ մի հզոր ուժ, Արծրունին, սակայն, ըստ էության չէր ըմբռնում ցարիզմի արտաքին քաղաքականության էությունը, նրա նվաճողական բնույթը։ Փաստորեն մի նվաճողին հակադրում էր մյուսը, դրանով ձգտելով լուծել Հայկական հարցը։

Կիպրոսի դաշնագիրը, ինչպես և Բեռլինի

---

1 Գրիգոր Արծրունի... «Թյուրքահայերի ...ետեսական դրությունը», Թիֆլիս, 1894 թ., էջ 36 և 37։

2 Նույն տեղում, էջ 36։

3 «Մշակ», 1878 թ., № 165։

պայմանագրի 61-րդ հոդվածը, իբրև քննադատության առարկա են դառնում Արծրունու կողմից։ Կիպրոսի դաշնագիրը նա համարում էր Անգլիայի դիվանագիտության խոշոր հաղթանակը և նրա տիրապետության սկիզբը Մերձավոր Արևելքում, իսկ Բեռլինի կոնգրեսի որոշումներին վերաբերվում էր թերահավատությամբ։ Արծրունու կարծիքով մեծ տերությունները Բեռլին հավաքվեցին ոչ թե Արևելյան հարցը լուծելու, այլ իրենց գործերը կարգավորելու համար։ Եվ այդ իսկ պատճառով նրանք խուսափեցին արմատական միջոցներից և բավականացան կիսամիջոցներով։

Բեռլինի կոնգրեսից հետո Արծրունին ժխտում էր դիվանագիտական ճանապարհով և եվրոպական պետությունների օգնությամբ Հայկական հարցի վճռման հնարավորությունը։ Նա գտնում էր, որ մեծ տերությունների մեջ եղած պայքարը և նրանց տնտեսական ու քաղաքական շահերը թույլ չեն տալիս օգնության ձեռք մեկնել Թյուրքիայում ճնշված ժողովուրդներին։

Գրիգոր Արծրունին իր ժամանակին կռահեց, թե հանձին Գերմանիայի հանդես եկավ իմպերիալիստական մի նոր գիշատիչ, որ նրա գլխավոր նպատակներից մեկն էր մեծ եռանդով առաջ տանել իր գաղութային քաղաքականությունը Արևելքում։

«Գերմանիան, Ֆրանս-Գերմանական պատերազմից հետո հասավ իր փառքի ամենարարձր կետին,— գրում էր Արծրունին։— Նրան պակաս է միայն մի բան— այն է գեր խաղալ Արևելքում, ունենալ մի հենակետ Արևելքում։ Եվ ահա այժմ իշխան Բիսմարկը, նույնքան քիչ հոգալով արևելյան քրիստոնյաների վրա, որքան նրանց մասին հոգաց Անգլիան և Ավստրիան, կաշխատե կաշառք առնել Թյուրքիայից, այսինքն մի որևէ ծովեզրյա տեղ, մի նավահանգիստ սեփականացնել, իսկ հույներին և հայերին կթողնի առաջվա դրության մեջ։»[1]

Արծրունին արևմտահայ ժողովրդի ազատագրման հարցին նվիրած իր վերջին առաջնորդողներից մեկում դրում էր. «Ժամանակի պահանջներին, Թյուրքաց հայերի անհրաժեշտ կարիքներին լրում տալը կարելի է, այո, ժամանակավորապես հետաձգել, բայց իսպառ խափանել երբեք չէ կարելի։ Եվ ինչքան երկար ժամանակ կհետաձգվի այդ պահանջները, այսքան մի օր ավելի մեծ ուժով կներկայանան նրանք, հանդես դուրս կգան նրանք անհապաղ լուծում պահանջելու»։[2]

1 «Մշակ», 1881 թ., № 29։

2 «Մշակ», 1887 թ., № 125։

1882 թվականից հետո ընդհատվեց Գրիգոր Արծրունու ազատագրական պրոպագանդան։ Ի՞նչ էր պատճառը, որ այդ ժամանակաշրջանի աչքի ընկնող հրապարակախոսը այդպես ինքնակամ ետ կանգնեց իր դավանանքից։

Այդ երևույթի պատճառը պետք է փընտրել 1881—1882 թ. թ. կատարված հասարակական-քաղաքական տեղաշարժերի մեջ։ Դեռ, Բեռլինի կոնգրեսում անէացան այն հույսերը, որ ունեին հայ գործիչներից շատերը եվրոպական մեծ պետությունների ազատագրական ձեռնարկումների նկատմամբ, ապա՝ ցարիզմը երես դարձրեց արևմտահայ ժողովրդից, իսկ Ալեքսանդր 3-րդի ժամանակ Ռուսաստանում ծավալված քաղաքական ռեակցիան իբրև Ընդհանրական դիրք բռնեց ազգային-ազատագրական շարժումների նկատմամբ։

Արծրունին իր դասակարգի՝ հայ բուրժուազիայի հարազատ զավակն էր, նրա լիբերալ գործիչներից մեկը, որը ձգտում էր առանց մասսայական ռևոլուցիոն պայքարի, ցարական Ռուսաստանի օգնությամբ վճռել Հայկական հարցը։ Նա հավատում էր ցարիզմի ազատագրական միսիայի անկեղծությանը և վստահ էր, որ նա ազատություն կբերի արևմտահայ ժողովրդին։ Սակայն Արծրունու հույսերը չարդարացան և նա համարձակություն չունեցավ իր դժգոհությունը արտահայտելու ցարիզմի ռեակցիոն արտաքին և ներքին քաղաքականության դեմ։

Արծրունու և մյուս հայ լիբերալների կծած ուղիով, ինչպես այդ պատմությունը ցույց տվեց, հնարավոր չէր վճռել հայկական հարցը։ Հարստահարված, ճնշված ժողովուրդների ազատագրման մի ուղի կա. այդ ուղին նշել են մարքսիզմի կլասիկները, մասնավորապես ընկեր Ստալինը։

«Հայաստանի զավակները, իրենց հայրենիքի հերոս պաշտպանները, բայց ոչ այնքան էլ հեռատես քաղաքագետները, որոնք բազմիցս խաբվել են իմպերիալիստական գիվանագիտության գիշատիչների կողմից, չեն կարող չտեսնել, որ դիվանագիտական կոմբինացիաների հին ուղին՝ Հայաստանի փրկության ուղի չէ։ Պարզ է դառնում, որ ճնշված ժողովուրդների ազատության ուղին կատարվելու է պրոլետարական ռևոլուցիայի միջոցով, որը Ռուսաստանում սկսվեց Հոկտեմբերին։ Այժմ բոլորի համար պարզ է, որ Ռուսաստանի ժողովուրդների բախտը, առանձնապես հայ ժողովրդի բախտը, սերտորեն կապված է Հոկտեմբերյան Ռեոլուցիայի բախտի հետ։»[1]

[1] И. В. Сталин—Соч., том IV, стр. 25—26.